ԱՌՕՐՅԱ ՀԻՆԳ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝
ԵՐՋԱՆԻԿ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Երջանկության կերտվածքը (Փիլիպպեցիս)

Մաս 6 - Փիլիպպեցիս 3:1-21

1. Ամեն օր հանգստացիր Աստծո շնորհքի մեջ

«...պարծենում ենք Հիսուս Քրիստոսով ու մարմնի վրա վստահություն չունենք:» Փիլիպպեցիս 3:3

Թակարդ – Օրինապաշտություն (Համար 26)

Ծեսեր – Մրցություն – Կրոն – Օրենքներ - Համբավ

«Ինչ վերաբերում է արդարությանը, որ բխում է օրենքից, անարատ էի:» Փիլիպպեցիս 3:6

«...ոչ թե իմ արդարությունն ունենամ, որ օրենքից է, այլ այն, որ Քրիստոսի հավատից է, այն արդարությունը, որ Աստծուց է հավատով:» Փիլիպպեցիս 3:9

2. Ամեն օր հիշիր թե ինչն է ամենակարևորը

«Բայց այն, ինչ ինձ <u>օգուտ էր</u>, Քրիստոսի համար <u>վնաս</u> համարեցի:» Փիլիպպեցիս 3:7

Թակարդ – Ժամանակակից մշակույթը
(Ա Հովհաննես 2:16)

«Եվ ամեն ինչն էլ վնաս եմ համարում իմ <u>Տեր Հիսուս Քրիստոսին գերազանց ճանաչելու համեմատ</u>: Նրա համար զրկվեցի ամեն ինչից, որ <u>աղբ եմ համարում</u>, որպեսզի <u>Քրիստոսին շահեմ</u> և <u>նրա մեջ գտնվեմ</u>.» Փիլիպպեցիս 3:8-9ա

3. Ամեն օր ավելի ճանաչիր Հիսուսին

«Որպեսզի <u>ճանաչեմ նրան</u> և նրա հարության զորությունը, մասնակից լինեմ նրա չարչարանքին, <u>կերպարանակից՝ նրա</u> մահվանը, որպեսզի մեռելներից հարություն առնելուն հասնեմ:» Փիլիպպեցիս 3:10-11

Թակարդ – Զբաղվածություն

«Հանդա՛ռտ մնացեք և ճանաչե՛ք, որ ես եմ Աստված:» Սաղ 46:10

4. Ամեն օր նայիր թե ինչ՞ի մեջ կարիք ունես աճելու

«Ոչ թե արդեն հասել եմ կամ թե արդեն կատարյալ եմ, այլ <u>ձգտում եմ, որ թերևս հասնեմ նրան</u>, ինչով Քրիստոս Հիսուսի կողմից բռնվեցի: Եղբայրնե՛ր, ես ինձ չեմ համարում, որ հասել եմ, ...» Փիլիպպեցիս 3:12-13

Թակարդ - Հպարտություն

«Ինքներդ <u>ձեզ քննե՛ք</u>, թե հավատի մե՞ջ եք: Ինքներդ <u>ձեզ փորձե՛ք</u>: Կամ չգիտե՞ք, որ Հիսուս Քրիստոսը ձեր մեջ է. միայն եթե չեք ձախողվել փորձելու մեջ:» Բ Կորնթացիս 13:5

5. Ամեն օր մոռացիր այն ինչ որ չի կարելի փոխել և կենտրոնացիր ապագայի վրա

«<u>Հետևում թողածը մոռանալով՝ դեպի առջևում եղածներն եմ ձգտում</u>: Հետևում եմ նպատակակետին՝ Հիսուս Քրիստոսով դեպի վեր՝ երկինք՝ Աստծու կողմից կոչվելու մրցանակին:» Փիլիպպեցիս 3:13-14

Թակարդներ – Զղջում

Չներել

Սովորություն

«Նախկին բաները մի՛ հիշեք և հին բաները մի՛ մտածեք: Ահա ես նոր բան եմ անում.» Եսայիա 43:18-19ա

Հաջորդ Քարոզի Թեման:

«Ինպե՞ս Հեռու Մնալ Ստրեսից»

Հովիվ Սարօ Խաչիկեան